

Արձանագրություն թիվ 5  
ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2019թ Հունվարի 29-ին

Օրակարգը՝

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

1. Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօրվա մեր նիստում քննարկվող հարցերը: Սկսում ենք ընթացիկ հարցերից: Այսօրվա գիտխորհուրդը ընդհանված է, քանի որ շատ կարևոր հարցի՝ բազային ֆինանսավորմամբ լաբորատորիաների փակման շուրջ է գնալու քննարկումը: Այս հարցի շուրջ քննարկումներ ենք ունեցել հունվարի 25-ին կայացած ժողովում, որին մասնակցում էին գիտական գծով պրոռեկտոր Գ.Գ.Գևորգյանը և գիտական բաժնի պետ Ի.Վարդանյանը, տարբեր ֆակուլտետներից բազային Գ/Հ լաբորատորիաների աշխատակիցներ, ղեկավարներ և որոշեցինք կազմել հանձնաժողով, յուրաքանչյուր ֆակուլտետ անցկացնի գիտխորհուրդ և տա իր տեսակետը՝ բողոքները և առաջարկները: Այս հարցի քննարկումից հետո նոր կանցնենք մեր օրակարգին: Կազմվել է աշխատանքային խումբ, որը նախապատրաստել է քննարկվելիք հարցի վերաբերյալ նախաբան, որից հետո կլսենք առաջարկները:

- Քիմիայի ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմը և բազային գիտահետազոտական լաբորատորիաների գիտաշխատողներն իրենց տարակուսանքն ու բողոքն արտահայտեցին բազային լաբորատորիաները մրցութային կարգի անցնելու կառավարության որոշման մասին: Տարիներ առաջ երբ ճյուղային և պրոբլեմային լաբորատորիաների հենքի վրա ստեղծվեցին բազային լաբորատորիաները, ոլորտի ղեկավարների գերնպատակը՝ մեկն էր, փրկել (և պահպանել) արդեն առկա ենթակառուցվածքները և ստեղծել պայմաններ դրանք զարգացնելու և հնարավորինս համաշունչ քայլելու համաշխարհային գիտական հանրության հետ: Այդ քայլը արվեց տասնյակ տարիների քրտնաջան աշխատանքով ստեղծված գիտական ուղղությունները պահպանելու, փրկելու և զարգացնելու համար:

Բոլոր մակարդակների ղեկավարները պնդում են, որ նորմալ հասարակարգ ստեղծելու առաջին գրավականը որակյալ կրթությունն է, իսկ տարբեր զեկույցներում միշտ լսում

ենք, որ մեր ԲՈՒՀ-երը պետք է դառնան գիտահետազոտական կենտրոններ, որտեղ էլ ամրապնդվելու է գիտության և կրթության կապը: Ինչպես կարող է գոյություն ունենալ այդպիսի կապ եթե դրա բաղադրամասերը լրիվ չեն: Մրցութային կարգը հնարավորություն կտա լուծելու լոկալ խնդիրներ, բայց ոչ զարգացնել հիմնարար ուսումնասիրություններ պահանջող ուղղությունները:

Ելույթ ունեցողները նաև նշեցին, որ բազային Գ/Հ լաբորատորիաներում հիմնականում աշխատում են երիտասարդ կադրեր՝ հայցորդներ, ասպիրանտներ և թեկնածուներ: Նման որոշումն կազդի նրանց հետագա գիտական գործունեության վրա, միարժամանակ կազդի նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակի վրա և ընդհանրապես կկտրվի տեսական և փորձնական գիտելիքների միջև կապը: Եվ վերջապես քիմիայի ֆակուլտետի շրջանավարտը չի կարող համարվել որակյալ և կայացած եթե չունենա փորձարարական հմտություններ: Լաբորատոր աշխատանքների ժամերը միայն մինիմալ կարողություններ են տալիս:

-Հաշվի առնելով վերոհիշյալը արվեցին հետևյալ առաջարկները.

- 1) ՀՀ կառավարության կողմից 27.12.2018թ-ին ընդունված համար N1515-Ն որոշման 1-ին կետի, 2-րդ ենթակետին, որը հանդիսանում է խիստ խախտում գործող օրենքի՝ համար ՀՕ-119, (ընդունված 30.12.2000թ) Գլուխ 3-ի, Հոդված 23-ի, կետ 4-ի ա,բ և գ ենթակետերին(համապատասխան օրենքը և որոշումը կցվում են):
- 2) Դիմել ԵՊՀ-ի Գիտական խորհրդին՝ հաշվի առնելով ֆակուլտետների կողմից տրված առաջարկները և դիտողությունները, դատապարտել և կանխել նման սխալ և հիմնարար գիտությունները կործանող որոշման ընդունումը:
- 3) Դիմել ԵՊՀ Արհմկոմիտե աշխատողների իրավունքները պաշտոնանելու համար:
- 4) Համախմբել ՀՀ գիտական հանրությանը, դիմել վերին ատյաններին (ՀՀ կառավարությանը, Ազգային ժողովին) և կանխել նման անօրեն որոշման կայացումը:աշխատակիցները իրենց վրդովմունքը հայտնեցին, գիտության և կրթության նկատմամբ, նման անթույլատրելի վերաբերմունքի մասին:

2.- Գիտխորհրդի նախագահ, պրոֆեսոր –Տ.Վ.Ղոչիկյան

Անցնենք մեր բուն օրակարգին: 1-ին հարցը ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ՝ Ա.Ի.Մարտիրյան

Քննությունները մեզ մոտ ավարտվել են արդյունքները հետևյալն են՝ Սննդի անվտանգություն մագիստրատուրայի քննությունները ավարտվել են առաջադիմությունը բարձր է և լուծարք ունեցող ուսանող չկա:

- Տ.Վ.Ղոչիկյան – Ի՞նչով է նման բարձր առաջադիմությունը բացատրվում:

Ա.Մարտիրյան- Մագիստրատուրայի 2 կուրսերում գումարային 7 ուսանող է (3+4) և լավ, սովորող, նպատակասլաց ուսանողներ են:

Ն.Ա.Դուրգարյան – Օրգանական քիմիա մասնագիտացմամբ մագիստրատուրայի 2-րդ կուրսում 6 ուսանող է գերազանց առաջադիմությամբ (նրանցից 1-ը Արփրնե Վարդանյանը Ռոստոկի Համալսարանում է): Մյուս 5 ուսանողները շատ խելացի և բարձր առաջադիմությամբ ուսանողներ են նրանցից մեկը՝ Դիաննա Հայրապետյանը անվանական կրթաթոշակառու է:

Շ.Ա.Մարգարյան –Ֆիզ. և կոլ. Քիմիա մասնագիտությամբ մագիստրատուրայի 1-ին կուրսում ունենք 4 գերազանց ուսանող:

-Գիտխորհրդի նախագահ Ս.Վ.Ղոչիկյան

-Եզրափակիչ քննությունների ավարտից հետո դուրս բերած գնահատականների պարզ է դառնում որ, բակալավրիատի բաժնից գումարային 17 ուսանող լուծարքներ ունեն:

- Ս.Վ.Ղոչիկյան – Օրակարգի երկրորդ հարցը՝ դասալսումների մասին:

- Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ն.Ա.Դուրգարյան

Դասալսումներ իրականացնում ենք, առավել կարևոր համարում լաբորատոր և գործնական դասերին մասնակցելը՝ քանզի լաբորատորի ժամանակ ակնհայտ է դառնում ուսանողի ինքնուրույնության աստիճանը փորձերի ընթացքում:

- Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ – Շ.Ա.Մարգարյան

Դասալսումներ լինում են ամեն ինչ ընթանում է նորմալ հունով:

3.Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր – Ս.Վ.Ղոչիկյան Ընթացիկ հարցերի մեջ ունենք ևս մեկ հարց դա անվանական կրթաթոշակների հարցն է:Անվանական կրթաթոշակի համար առաջարկվեցին քիմիա բաժնի IV կուրսի ուսանող Այվազյան Տիգրան Մհերի և մագիստրատուրայի II կուրսի ուսանողուհի Հայրապետյան Դիանա Կարենի:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Ս.Վ.Ղոչիկյան

Մ.Ա.Սամվելյան